Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ

a r a v o t d a i l y

33/4129/ 23 փետրվարի 2012 հինգշաբթի

ISSN 1829-2224
12021
9 771829 222003

## Ա

# Հայերն ու արհեստագիտությունը

Շատ հասկանալի է, որ ոչ մի հասարակություն կրթության գործի մեջ չի կարող շատ առաջ գնալ, եթե ուսման հետ միացրած չլինի եւ արհեստագիտությունը: Այդ կողմից Բաքվի հայ հասարակությունը պետք է կրթության խիստ ստորին աստիճանների վրա դասել: Նա ոչ միայն չի աշխատում զարգացնել արհեստը, այլեւ տակավին մի հին նախապաշարմունքով բավական արհամարհանքով է նայում դեպի արհեստավորը: Այսօր մեր հասարակության մեջ մի հարստահարող չարչի, մի ստոր գրագիր ծառայող կամ մի հազար ու մեկ խարդախությամբ հարստացած պարոն ավելի մեծ պատիվ ունի, քան իր արդար աշխատանքով ապրող արհեստավորը:

Բոլորին հայտնի է, որ Բաքուն, որպես ծովեզրյա քաղաք եւ որպես ամենահարմար նավահանգիստ, մեծ ապագա ունի, մանավանդ այն ժամանակ, երբ այդ քաղաքը միացած կլինի Փոթի-Թիֆլիսյան երկաթուղու գծի հետ: Նա եւ այժմ Անդրկովկասյան քաղաքներից առաջինը կարող է համարվել իր արդյունաբերություններով:

Այսքանը բավական է միայն հիշել, որ ամեն տարի մի քանի միլիոն փութ նավթ է արդյունահանում: Դրա համեմատ արհեստագիտությունը պետք է ծաղկած լինի, որի վրա ամենեւին ուշադրություն չի դարձնում մեր հայ հասարակությունը:

Իբրեւ օրինակ ես կհիշեմ մի քանի փաստեր: Բաքվի մեջ այժմ կան վեց գլխավոր գործարաններ մեքենաներ պատրաստելու համար (Զոպստջվօւ ջՈԶՏՊ), որոնց մեջ աշխատում են հարյուրավոր գործավորներ: Այդ գործավորները, սկսյալ առաջին վարպետից մինչեւ վերջին աշակերտը, բոլորը ռուսներ, շվեդացիներ կամ եվրոպացիք են, բայց ոչ մի հայ: Դրա հակառակ, մտեք մեր դատարանները, մեր պոլիցիան, մեր մաքսատունը եւ մեր պաշտոնական այլ հիմնարկությունների մեջ, այնտեղ կտեսնեք բազմաթիվ հայ ծառայողների, որոնց մեծամասնությունը հասարակ գրագիրներ են: Մեր ծնողները ավելի բարվոք են համարում, որ իրանց որդիները ամբողջ կյանքում գրագրի սեղանի առջեւ մաշվեն, բարակցավ ստանան, որ վերջապես չինովնիկ դառնան, քան թե, մի գործարան հանձնելով, նրանցից օրինավոր արհեստավորներ պատրաստեն:

Հուսով եմ, որ ծնողները, մանավանդ աղքատ ծնողները, ուշադրություն կդարձնեն այդ կետի վրա:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

1882թ.

# «Ընտրակաշառքի ժամանակը չի»



Երեկ մամուլում հրապարակում էր եղել, որ ՕԵԿ-ը ընտրակաշառք է բաժանում Էրեբունի համայնքում: Ըստ հրապարակման՝ ընտրակաշառքը բաժանվում է հիմնականում թոշակառուներին եւ ասվում է, թե իբր Էրեբունի համայնքի թաղապետարանն է սոցիալական օգնություն ցուցաբերում տարեցներին: Մինչդեռ ՕԵԿ-ի աշխատանքները Էրեբունի համայնքում կոորդինացնում է Էդուարդ Մաղաթյանը, որն, ինչպես հայտնի է, լինելու է ՕԵԿ համամասնական ցուցակի առաջատար հորիզոնականներում: Այս տեղեկությունն, այսպես ասած, առաջին ձեռքից՝ Էդուարդ Մաղաթյանից, ճշտել aravot.am-ին չհաջողվեց: Նա անհասանելի էր: Փոխարենը՝ ՕԵԿ խմբակցության ղեկավար Հեղինե Բիշարյանը մեր հարցից վրդովվեց. «Լավ, էլի, լավ, էլի, ախր էդքան էլ սո՛ւտ... ասում ա՝ սո՛ւտ՝ էդքա՞ն էլ սուտ: Նախ էսօր ընտրակաշառքի ժամանակ չի, երկրորդն էլ՝ բացարձակ իրականությանը չի համապատասխանում»: Հետաքրքրվեցինք՝ երբ ընտրակաշառքի ժամանակը գա՝ բաժանելո՞ւ եք, Հեղինե Բիշարյանը պատասխանեց. «ՕԵԿ-ը երբեք ընտրակաշառքով չի առաջնորդվել, չի առաջնորդվելու եւ այս պահին էլ նման բան չի անում: Եթե մի բան են անում՝ ընտրակաշա՞ռք է»:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Օրինագծի շուրջ էլ մի չափաբաժին կեղծիք կա

Երեկ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը համապատասխան գրությամբ դիմել է երկրի խորհրդարանի նախագահ Սամվել Նիկոյանին՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրամշակման նպատակով վերադարձնելու մասին: Այդպես է հայտարարում ՀՀ կառավարության լրատվական ծառայությունը, իսկ ահա ԱԺ խոսնակ Նիկոյանն ասում է, որ ոչ թե կառավարությունը, այլ ԱԺ-ն է այդ նախաձեռնության հեղինակը, որովհետեւ «բովանդակային որոշակի փոփոխություններ են առաջարկվել, որոնք հարկ է քննարկել առաջին ընթերցման ռեժիմում»:

Կարդացեք էջ 2:

### Միեւնույն է

«Միեւնույն է»,- «Առավոտի» հարցին՝ ՀԱԿ-ում քննարկվում է Կոնգրեսի համամասնական ցուցակի եւ մեծամասնական կարգով առաջադրումների հարցը՝ Դուք հավակնություններ ունե՞ք որեւէ ընտրակարգով առաջադրվելու, ասաց «Ազատություն» կուսակցության նախագահ, ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը: Նա նաեւ հավելեց, որ կցանկանար ինչ-որ ակտիվ բանի մասնակից լինել, բայց այդ առումով սկզբունքային հարցադրումներ չի արել եւ երբեք որեւէ քննարկման չի մասնակցել, իսկ երբ ՀԱԿ-ում իրեն հարցրել են, ասել է՝ «միեւնույն է»:

Կարդացեք էջ**D**3:

### Ավտովթարից զինվոր է մահացել

Երեկ ավտովթար է տեղի ունեցել Սյունիքի մարզում: Ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի հաղորդմամբ՝ ժամը 21-ի սահմաններում 45-ամյա Արմիկ Բալասանյանի վարած ավտոմեքենան Սյունիքի մարզի Նոնաձոր գյուղից դեպի ԼՂՀ Միջնավան քաղաք տանող ճանապարհի 4-րդ կմ-ի հատվածում դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ մոտ 60 մետր գլորվել ձորը: Վթարի հետեւանքով վարորդն ու նրա որդիներից 17-ամյա Արտյոմ Բալասանյանը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի հիվանդանոց, իսկ մյուս որդին՝ 19-ամյա Ալբերտ Բալասանյանը, տեղում մահացել է: Նա ծառայում էր ԼՂՀ Ջաբրաիլի զորամասում եւ կարճատեւ արձակուրդից հետո մեկնում էր զորամաս:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Ազդակ» ակումբի հյուրն է ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակյանը:

### Եղանակ

Երեւան - 12 - 1, Շիրակ - 20 - 4, Կոտայք - 20 - 4, Գեղարքունիք - 20 - 4, Լոռի - 13 - 2, Տավուշ - 15 0, Արագածոտն լեռներ - 20 - 4, Արագածոտն նախալեռն. - 12 0, Արարատ - 12 0, Արմավիր - 12 0, Վայոց Ձոր լեռներ - 20 - 4, Վայոց Ձոր նախալեռն. - 12 + 1, Սյունիքի հովիտներ - 11 0, Սյունիքի նախալեռներ - 12 - 2, Արցախ - 10 0

## «Խորը անվստահություն»՝ իշխանության եւ ընդդիմության միջեւ

ԵԱՀԿ-ի ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) մտադիր է Հայաստան գործուղել 24 երկարաժամկետ եւ 250 կարճաժամկետ դիտորդների՝ մայիսին կայանալիք ԱԺ ընտրություններում դիտորդական առաքելություն իրականացնելու համար:

Այս մասին նշված է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հրապարակած զեկույցում, որտեղ, ըստ «Ազատություն» ռ/կ-ի, ամփոփված են հունվարի 30-ից փետրվարի 1-ը ՀՀ-ում անցկացված «Կարիքների գնահատման» առաքելության արդյունքները:

ԺՀՄԻԳ-ը ՀՀ իշխանությունների, ընտրական գործընթացի պատասխանատուների, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների, լրատվամիջոցների, քաղաքացիական հասարակության հետ հանդիպումների արդյունքում ամփոփելով խորհրդարանական ընտրություններից առաջ Հայաստանում առկա վիճակը՝ հանգել է եզրակացության, որ թեեւ ընտրական գործընթացը կարգավորող բարեփոխված օրենսգիրքը ժողովրդավարական ընտրությունների անցկացումն ապահովելու ներուժ ունի, բայց միայն օրենսդրությունը չի կարող դա երաշխավորել: «Հիմնական մարտահրավեր է մնում ժողովրդավարական ընտրությունների անցկացմանը բոլոր շահագրգիռ կողմերի հավասար եւ պատշաճ մասնակցությունը»,- նշված է զեկույցում:

Արձանագրելով, որ իշխանությունների կողմից ընտրությունների նախապատրաստումն ընթանում է բնականոն եւ նորմալ հունով, ԺՀՄԻԳ-ը միաժամանակ նշել է, որ Հայաստանի քաղաքական մթնոլորտը բնորոշվում է իշխանությունների եւ ընդդիմության միջեւ խորը անվստահությամբ, ինչը արտացոլվում է առաջիկա ընտրությունների վերաբերյալ նրանց սպասելիքներում:

Անդրադառնալով բարեփոխված Ընտրական օրենսգրքի այն պահանջին, որ բոլոր տեղական դիտորդները պետք է որակավորման սերտիֆիկատներ ստանան Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից թեստավորման արդյունքներով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը մեջբերում է իրենց հետ զրույցներում արտահայտված այն մտահոգությունը, որ դա վարչական խոչընդոտ է եւ կարող է բացասական ազդեցություն ունենալ դիտորդական առաքելության վրա:

ՀՀ լրատվական դաշտը բազմաթիվ զրուցակիցների կողմից բնորոշվել է որպես «կողմնակալ»: «ՀՌԱՀ-ն է ընտրարշավի լուսաբանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող պատասխանատու մարմինը: Բայց դեռ հստակ չէ, թե ինչպես է հանձնաժողովը վերահսկելու Հանրային հեռուստատեսությանն ու ռադիոն, որոնք հատուկ պարտավորություններ ունեն պաշտոնական քարոզարշավի ժամանակ»,- ասված է զեկույցում:

Ընդգծելով, որ ՀՀ իշխանությունները արտահայտել են թափանցիկ եւ ԵԱՀԿ չափանիշներին համապատասխան ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու իրենց հստակ մտադրությունը, ԺՀՄԻԳ-ը տեղեկացնում է, որ երկարաժամկետ դիտորդական առաքելություն իրականացնողները պետք է հետեւեն թեկնածուների գրանցման գործընթացին, ընտրարշավին, իսկ կարճաժամկետ դիտորդները՝ քվեարկությանը, հաշվարկին եւ արդյունքների ամփոփմանը: «Հայաստանի իշխանությունները պաշտոնապես տեղեկացրել են, որ հրավերը կուղարկվի ընտրությունների եւ քարոզարշավի ժամկետների պաշտոնական հրապարակումից անմիջապես հետո»,- նշված է զեկույցում:

# Իշխանությունների «փորացավի» մասին ոչինչ հայտնի չէ

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրինագիծը լրամշակման նպատակով վերադարձվել է կառավարությանը:

Երեկ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը համապատասխան գրությամբ դիմել է երկրի խորհրդարանի նախագահ Սամվել Նիկոյանին՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրամշակման նպատակով վերադարձնելու մասին: Վիճահարույց այս օրինագիծն ԱԺ-ում ընդունվել էր առաջին ընթերցմամբ, ինչպես խորհրդարանական ընդդիմությունն է պնդում՝ կեղծիքներով եւ ՀՀԿ-ական պատգամավորների կողմից բացակա գործընկերների փոխարեն քվեարկելու շնորհիվ: Ի դեպ, այն, որ վարչապետն օրինագիծը ետ է կանչել՝ ընդդիմության համար անակնկալ է եղել:

Ի պատասխան «Առավոտի» հարցին, թե՝ այնուամենայնիվ, ինչո՞ւ կառավարությունը որոշեց լրամշակել այս օրինագիծը, որի պաշտպանությամբ հանդես էին եկել կառավարության ներկայացուցիչները, «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստեփան Սաֆարյանն ասաց. «Սա փորձ է՝ փրկելու իրավիճակը, որովհետեւ այն խայտառակություն էր, կեղծիք, որ տեղի ունեցավ ԱԺ-ում հենց այս օրինագծի քվեարկության ժամանակ: Բացի այդ, այս օրինագծի վերաբերյալ կար բուռն քաղաքական դժգոհություն, որն արտահայտվել էր դեռ օրենքի՝ առաջին ընթերցմամբ քննարկման ժամանակ, երբ անթույլատրելի համարվեց բանակի ներգրավումը ներքաղաքական պրոցեսներում: Ես կարծում եմ՝ այդ օրինագիծը չափազանց վատ ընթացքի մեջ էր թե՛ բովանդակության, թե՛ պրոցեսուալ իմաստով, եւ վարչապետի քայլն այս օրինագիծը փրկելու եւ նոր գործընթաց սկսելու հնարավորություն է տալիս»:



Կարծում եք, որ կառավարությունը լրամշակման արդյունքում վերանայելո՞ւ է օրինագծի վիճահարույց դրույթը, թե՞ նրա նպատակը օրինագիծը կրկին շրջանառության մեջ դնել եւ ընդունելով՝ այն պարզապես լեգիտիմացնելն է: «Ժառանգության» բոլոր պատգամավորներն իրենց բոլոր ելույթներում ասել են, որ օրինագիծը հակասում է Սահմանադրությանը, եւ եթե կառավարությունն ուզում է խախտել Սահմանադրությունը, ապա կարող է նույն ոգով շարունակել, եթե ոչ՝ բնականաբար, օրենքի ետևանշը հրաշալի առիթ է այդ դրույթները հանելու համար: Առողջ տրամաբանությունը հուշում է, որ կառավարությունը պետք է հանի այդ դրույթը, որովհետեւ դա ակնհայտորեն չի բխում ՀՀ միջազգային պարտավորություններից ու նաեւ հակասում է «մարտիմեկյան» խորհրդարանական հանձնաժողովի եզրակացություններից, հետեւաբար՝ ՀՀ իշխանությունները կարող են գոնե արտաքին դաշտում հաշվետու լինելու իմաստով լուրջ խնդիրների առաջ կանգնել»,- մեր հարցին արձագանքելով՝ ասաց խմբակցության ղեկավարը: Ի դեպ, ավելի վաղ «Առավոտի» հետ զրույցում Ստեփան Սաֆարյանը կարծիք էր հայտնել, որ կեղծված քվեարկությամբ առաջին ընթերցմամբ ընդունված այս օրինագիծը պետք է շրջանառությունից հանվի:

Երեկ միայն ավելի ուշ հայտնի դարձավ, որ վիճահարույց այս օրինագիծը ոչ թե վարչապետը կամ կառավարությունն են իրենց նախաձեռնությամբ ետ կանչել, այլ խորհրդարանի խոսնակ Սամվել Նիկոյանի անցկացրած խորհրդակցության ժամանակ օրենսդիրներն են որոշել լրամշակման համար վերադարձնել կառավարությանը: Այդ մասին «Ա1+»-ի հետ զրույցում ասել է ինքը՝ ԱԺ նախագահը. «Մենք ներկայացրինք այն փոփոխությունների եւ լրացումների առաջարկությունները, որոնք կարծում ենք, որ պետք է առաջին ընթերցմամբ քննարկվեն: Խորհրդակցեցի վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ, եւ որոշեցինք ուղարկել օրինագիծը լրամշակման»:

Ի պատասխան հարցին, թե՝ հնարավոր չէ՞ր, որ այդ փոփոխությունները արվեին մինչեւ օրինագծի երկրորդ ընթերցումն ընկած ժամանակահատվածում, Նիկոյանն ասել է, թե բովանդակային որոշակի փոփոխություններ են առաջարկվել, որոնք հարկ է քննարկել առաջին ընթերցման ռեժիմում:

ԱԺ նախագահը ո՛չ հաստատել, ո՛չ բացառել է, թե ընդդիմության եւ փորձագետների մտահոգությունը՝ բանակը ներքին խնդիրներում օգտագործելու վերաբերյալ դրույթը կարող է օրինագծից հանվել: «Կարծում եմ՝ լրացուցիչ հստակեցման անհրաժեշտություն կա»,- ասել է Նիկոյանը՝ հավելելով, թե ներկա է եղել խորհրդարանում քննարկմանը ու տեղյակ է ընդդիմության մտահոգություններին, որոնցից որոշները կիսում է, որոշները՝ ոչ: «Բայց բավականին առաջարկներ արել ենք, եւ վստահ եմ, որ լրամշակված տարբերակով օրինագիծն ընդունելի կլինի քաղաքական դաշտի համար»,- հույս է հայտնել ԱԺ նախագահը:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# «Այնպիսի հայտնի մարդիկ կան, որ Աստված հեռու պահի»

ՀՅԴ բյուրոյի անդամ, ԱԺ Դաշնակցություն խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանը երեկ խորհրդարանում պատասխանելով «Ազատություն» ռադիոկայանի հարցին՝ կլինե՞ն ՀՅԴ համամասնական ցուցակում հայտնի անուններ, ասաց. «Շատ տարբեր միջավայրերում եւ բնագավառներում եւ միայն հայտնի եւ ճանաչված լինելը չենք դիտարկում մեր ցանկում հայտնվելու համար, այնպիսի հայտնի մարդիկ կան Հայաստանում, որ Աստված հեռու պահի»



Ի պատասխան հաջորդ հարցի՝ այսինքն՝ չի՞ բացառվում, որ ՀՅԴ ցուցակում եւս կլինեն հայտնի անուններ, պարոն Հովհաննիսյանն ասաց. «Արդեն պարզ է, որ կլինեն, բայց ինչ ձեւով հայտնի՝ ցույց կտա ժամանակը: Մեր ցանկի մեջ միշտ էլ լինում են ոչ կուսակցական մարդիկ, հիմա էլ կլինեն, ըստ ամենայնի»:

Նախորդ օրը թերթերից մեկում հրապարակվել էր ՀՅԴ համամասնական ցուցակի առաջին տասնյակը, որը կազմել էր լրատվամիջոցը, եւ երեկ Վահան Հովհաննիսյանն ասաց, թե չկա նման ցուցակ, եւ այդ տեղեկատվությունը իրականության հետ կապ չունի. «Երբ որ մենք կհրապարակենք մեր ցուցակը, միայն մեր հրապարակածը ճիշտ կլինի, բայց ուրիշ որեւէ մեկինը չի կարող ճիշտ լինել»:

«Առավոտը» հարցրեց՝ արդյոք 2012-ի նախընտրական իրավիճակն ավելի՞ լարված է, քան 2007-ինը, ի պատասխան մեր այս հարցի՝ պարոն Հովհաննիսյանն ասաց. «Ես կարծում եմ՝ մի քիչ այլ է, դժվար է ասել՝ լարված է, թե լարված չէ, մի քանի շաբաթ էլ անցնի, ընտրությունները մոտենան, այդ ժամանակ լարվածության աստիճանը կկարողանանք գնահատել, բայց որ իրավիճակը տարբեր է՝ փաստ է, որովհետեւ այս անգամ իշխանություններն ունենալով գերխնդիր՝ ամեն գնով իշխանությունը պահելու, ստացել են նաեւ երկրորդ գերխնդիրը՝ ամեն ինչ անել, որ մարտի 1 չկրկնվի: Եվ հիմա գտնվում են այս երկու գերխնդիրների արանքում: Այսինքն՝ ուղեցույց աստղն առաջ մեկ հատ էր, հիմա երկու հատ է»: ՀՅԴ խմբակցության ղեկավարի մեկնաբանությամբ՝ «Ընտրությունը կամ սերնդափոխություն է, կամ իշխանափոխություն է, կամ՝ երկուսը միասին: Ես Հայաստանի մասին չեմ ասում, ասում եմ նորմալ երկրների մասին: Հիմա Հայաստանում ավելի շատ իշխանափոխության կողմն է թեքվում, քան սերնդափոխության»:

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 23.02.2012

# Բագրատյանը պատրաստ է կոալիցիային անվճար սպասարկել

ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանն ասում է, որ մինչեւ մայիս ցանկացած կուսակցության անվճար մասնագիտական օգնություն ցույց կտա:



- Մարտի 1-ին կայանալու է Հայ ազգային կոնգրեսի այս տարվա առաջին հանրահավաքը: Կարծում եք, որ այն կլինի ՀԱԿ-ի հանրահավաքային շրջանի բացո՞ւմը: Դրան կհաջորդե՞ն ՀԱԿ-ի ակտիվ հանրահավաքները:
- Ենթադրում եմ՝ այո:
- ՀԱԿ-ում քննարկումներ եղե՞լ են, կարո՞ղ եք որոշակի փակագծեր բացել՝ ամսի 1-ի հանրահավաքում հիմնականում ի՞նչ հարցեր են շոշափվելու:
- Ես տեղյակ չեմ: Նման քննարկումներին չեմ մասնակցում: Միայն գիտեմ, որ նախեւառաջ պետք է հարգանքի տուրք մատուցվի «մարտի 1»-ի զոհերին:
- 2008 թվականի մարտիմեկյան իրադարձությունների տարելիցի առիթով այլ միջոցառումներ է՞լ են նախատեսված:
- Ելնելով ընթացիկ քաղաքական բաներից դա կլինի. ՀԱԿ-ը հարգանքի տուրք կմատուցի:
- ՀԱԿ-ը որդեգրել է մի թեզ, եւ Հայ ազգային կոնգրեսի առանցքային դեմքերն էլ մշտապես հայտարարում են, որ առաջիկա խորհրդարանական ընտրություններում նպատակ չունեն պատգամավորի մանդատ ստանալ. խնդիրը խորհրդարանում մեծամասնություն հավաքելն է, որպեսզի հետագայում հնարավորություններ լինեն Հայաստանում քաղաքական իրավիճակ փոխել: Այն պարագայում, երբ ԲՀԿ-ն վերահաստատեց կոալիցիային իր հավատարմությունը, ՀՀԿ-ի ձեռքում էլ իշխանական լծակներն են, հնարավոր համարո՞ւմ եք այդ հավակնությունների իրականացումը, մանավանդ՝ աչքի առաջ ունենալով հրազդանյան ընտրությունների փորձը: ՀԱԿ-ը կկարողանա՞ խորհրդարանական ընտրություններից ստանալ իր ուզածը:
- Ես չեմ կարող ձեր հարցին պատասխանել: Անձամբ ես՝ հա, հնարավոր համարում եմ: Բայց թե ի՞նչ կստացվի՝ չեմ կարող ասել: Այսինքն՝ ի՞նչ եք ուզում, որ ես ասեմ:
- Մտավախություններ չկա՞ն, որ այն հույսերը, որ կապվում են այս ընտրությունների հետ, այն ակնկալիքները, որ կան՝ նորից չեն արդարանա:
- Իհարկե, մտավախություններ կան: Իսկ ո՞ւմ մոտ չկա: Եղե՞լ է մեկը, ով ասել է՝ մտավախություններ չունենք:
- Իսկ Դուք ինչպե՞ս եք գնահատում նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանի՝ ԲՀԿ-ին անդամակցությունը:
- Դա իմ հարցը չէ, ինձ մի տվեք այդ հարցը:
- Ինչո՞ւ:
- Դե, մի քաղաքական գործչի՝ վարչապետին, չեն հարցնում նախարարի մասին: Անձնական, սուբյեկտիվ հարց ինձ մի տվեք: Դա իր անձնական գործն է: Այն աստիճանի անձնական, որ նման դեպքերում ինձ մոտ երբեք վերլուծելու պահանջ չի առաջանում:
- Անցած տարեվերջյան հանրահավաքում առաջին նախագահը ԲՀԿ-ի «ճիշտ» կողմնորոշումների վերաբերյալ հայտարարություն արեց. 2012-ի սկզբին՝ նոր կոալիցիոն համաձայնագրով, ԲՀԿ-ն վերահաստատեց իր հավատարմությունը կոալիցիային: Ի՞նչ գնահատականներ կտաք:
- Առաջին նախագահի հայտարարությունից հետո արագացավ բոլոր կուսակցությունների կողմնորոշումը, եւ ես տեսնում եմ, որ խորհրդարանական կոալիցիան որոշեց եղբայրանալ: Բայց դա՝ այս պահի դրությամբ:
- Այսինքն՝ բացառված չէ՞, որ առաջիկա զարգացումներն այլ իրավիճակի հանգեցնեն:
- Ոչինչ բացառված չէ:
- ԲՀԿ-ն Հայաստան է հրավիրել համաշխարհային մակարդակի մի շարք տնտեսագետների, որոնց օգնությամբ կազմելու է իր նախընտրական ծրագիրը, որն էլ լինելու է Հայաստանի տնտեսությունը փրկելու ԲՀԿ-ի տեսլականը: Ի՞նչ եք կարծում՝ Հայաստանում մենք չունե՞նք մասնագետներ, որոնք ավելի ծանոթ են հայաստանյան իրականությանը եւ ավելի իրատեսական տարբերակներ կարող էին առաջարկել:
- Հարցի մեջ տրամաբանություն կա: Տեղյակ եմ, որ դրսից մարդկանց են հրավիրել, եւ տիրապետում եմ, թե ովքեր են: Վատ բան նրանց հասցեին ասել դժվար է, բայց նաեւ լավ բան էլ ասելու չկա առանձնապես: Այդ մարդկանց հրավիրելը եւ այլն պետք է դիտարկել PR սահմաններում:
Ես մի անգամ ասել եմ եւ նորից եմ ասում՝ ցանկացած կուսակցություն, այդ թվում կոալիցիոն, ինձ դիմի՝ կստանա ձրի օգնություն՝ այս կամ այն ծրագիրը գրելիս: Բայց ձրի կլինի մինչեւ մայիս ամիսը:
- Դժվար է պատկերացնել, որ կոալիցիոն կուսակցությունները կդիմեն Ձեզ՝ խորհրդատվության հարցերով, բայց եթե դիմեն՝ ՀԱԿ-ում խանդ չի՞ առաջանա:
- ՀԱԿ-ը որեւէ գործ չունի տնտեսագետ Բագրատյանի հետ: Բժիշկը, որ բուժում է, հո չի՞ ասում՝ կուսակցություն: Եթե որեւէ հարցով մարդիկ ինձ դիմեն, որեւէ խնդիր չի առաջանա՝ կիսվելու կամ կարծիք հայտնելու: Նաեւ՝ ես չէի ցանկանա, որ դա մեծամտություն ընկալվեր: Չեմ կարծում, որ այլ կուսակցություններում այլ ուժեր չկան: Հուսով եմ՝ կան, բայց որեւիցե մեկը խնդիր չի ունեցել եւ չի ունենա ինձ դիմելու:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՄԵԿ ԼՈՒՐ

### Ըստ Աշոտ Բլեյանի՝ ԲՀԿ-ն ընդդիմություն է

Aravot.am-ի հետ զրույցում «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանն անդրադառնալով ներքաղաքական խնդիրներին՝ նշեց. «Ձեւը խաղ է անցավոր, եւ դա նորմալ է: Չպետք է մոռանալ, որ նախընտրական փուլն ավարտվում է, եւ շնդալից մտնում ենք ընտրական փուլ: Կարծում եմ, որ այս տարվա խորհրդարանական ընտրությունները էապես կտարբերվեն 2007-ի խորհրդարանական ընտրություններից: Այնտեղ ընդդիմություն ասածը՝ որպես այդպիսին, որ կարող էր ինչ-որ բան փոխել, չկար, ամեն ինչ կանխատեսելի էր: Մի փոքր անակնկալ եղավ «Ժառանգության» մասով, որը ոչինչ գրեթե չփոխեց»:

Մեր հարցին՝ իսկ ներկայիս ընդդիմության գործունեությունն ինչպե՞ս է գնահատում, Ա. Բլեյանը պատասխանեց. «Հիմա ոչ միայն կա ընդդիմություն, այլեւ հիմա այն քաղաքական ուժ է, որ ինքնուրույն է հանդես գալիս եւ փորձում առավելագույն ձայներ հավաքել խորհրդարանում: Ընդդիմություն է նաեւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը»:

Դառնալով ՀՀԿ-ի գործունեությանը՝ պարոն Բլեյանը նկատեց. «ՀՀԿ-ն համախմբել է իր ողջ հնարավորությունները, նշանակում է, որ անհանգստանում է ինչ-որ բանից: Նա տեսնում է, որ քաղաքական դաշտն այլ է, որ այլեւս 2007-ը չէ, երբ ամեն ինչ ծրագրված էր»:

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի վերադարձի մասին խոսակցությունների մասին էլ ասաց, թե ծամոնի նման կպչուն մի բան են դարձել: Բլեյանի կարծիքով՝ երկրորդ նախագահը չի վերադառնա, եւ Վարդան Օսկանյանի՝ ԲՀԿ անդամակցությունը հենց վերջ է դնում այդ մտայնություններին:

Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Ադիբեկյանը 0,01 տոկոս վարկանիշ պիտի ունենա, որ հայտարարություն անի»





Երեկ մամուլի ասուլիսում սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանը, ներկայացնելով «Սոցիոմետր» սոցիոլոգիական ծառայության անցկացրած հարցումների արդյունքները, որոնք վերաբերում են կուսակցությունների վարկանիշին, հայտարարել է, թե ՀՀԿ-ն ունի 16,0%, ԲՀԿ-ն՝ 14,7%, ՀԱԿ-ն ունի 3,5%, ՀՅԴ-ն՝ 2,5%, ՕԵԿ-ն ունի 2,1%, «Ժառանգություն»-ը՝ 2,1%, իսկ «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը՝ 0,1%: «Ազատ դեմոկրատների» վերաբերյալ մեկ այլ հայտարարությամբ էլ հանդես էր եկել Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի նախագահ Գեւորգ Պողոսյանը՝ ասելով, որ եթե իշխանություններն իրենց ռեսուրսներն օգտագործեն՝ հնարավոր է, որ ԱԺ մտնեն կուսակցություններ, «որոնք որեւէ աշխատանք չեն տանում մարզերում եւ ճանաչում չունեն»: Նա նաեւ հավելել էր, թե «Ազատ դեմոկրատները» հարցումներում «ընդհանրապես չի երեւում»:

Արձագանքելով այս հայտարարություններին՝ «Ազատ դեմոկրատներ» կուսակցության վարչության անդամ Գառնիկ Գեւորգյանն aravot.am-ի հետ զրույցում ասաց. «Մարդը ինքը պետք է գոնե 0,01 տոկոս վարկանիշ ու հեղինակություն ունենա, որպեսզի որեւէ քաղաքական ուժի վարկանիշի վերաբերյալ հայտարարություններ ու դատողություններ անի»: Բացի այդ, ըստ Գեւորգյանի, Ադիբեկյանի ներկայացրած թվերով ստացվում է, որ ԱԺ-ում հայտնվելու են միայն ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն, ու նոր խորհրդարանը նույնիսկ այսօրվա պատկերը չի ունենալու: «Դա արդեն իսկ ծիծաղելի է»,- նշեց Գ. Գեւորգյանը: Ինչ վերաբերում է Պողոսյանի պնդմանը, թե՝ կուսակցությունը մարզերում աշխատանք չի տանում եւ ճանաչում չունի, կամ հարցումներում «չի երեւում», ապա ըստ կուսակցության ներկայացուցչի՝ մարզերում իրենց ճանաչվածության մասին կարող են խոսել ոչ թե Երեւանում նստած սոցիոլոգները, այլ մարզերի բնակիչները, որոնց հետ «Ազատ Դեմոկրատների» ներկայացուցիչները ամենօրյա շփման մեջ են: «Ի դեպ, հենց այսօր մեր կուսակցության ներկայացուցիչներն այցելել են Լոռու եւ Շիրակի մարզեր, որտեղ բազմամարդ հանդիպումներ են ունեցել մեր տարածքային կառույցների անդամների եւ բնակչության հետ»,- մանրամասնեց Գեւորգյանը:

Ինչ վերաբերում է այս կուսակցությունն իշխանությունների հետ կապելու փորձերին, ապա նրա մատուցմամբ՝ նման անհեթեթ կարծիքները անիմաստ է մեկնաբանել՝ հատկապես հաշվի առնելով դրանց հեղինակներին:

Գեւորգյանը, ի պատասխան մեր հարցին՝ իսկ արդյոք կուսակցությունը վարկանիշ ունի՞ եւ պատրա՞ստ է հաղթահարել ԱԺ-ում հայտնվելու 5 տոկոսանոց շեմը, հայտարարեց, թե կուսակցությունը «պատրաստ է առաջիկա խորհրդարանական ընտրություններին եւ ամեն ինչ անում է ոչ միայն ԱԺ-ում հայտնվելու շեմը հաղթահարելու, այլեւ խորհրդարանում նշանակալի ներկայություն ունենալու համար»:

Ն. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# ԲՀԿ-ն բարեգործություն է անում՝ տնտեսվարողին գցելով «փոսը»

## Անվճար ավտոբուսները ուղեւոր են խլում



Բարեգործություն են անում մաշված եւ վտանգավոր «պազիկներով»:




Բարվոք «Բոգդաններով» գիծը սպասարկելու համար «Կինգ դե լյուքսը» հազարավոր դոլարների վարկեր է վերցրել:



«Կինգ դե լյուքս» տրանսպորտային ընկերությունը, որը սպասարկում է Աբովյան քաղաքի թիվ 1, 2, 3 եւ Աբովյան-Երեւան թիվ 259 երթուղագիծը, օրինական կարգով շահել է նշյալ երթուղագծերը սպասարկելու մրցույթը, տարիներ ի վեր պետությանը մեծ հարկեր է վճարել, սակայն այսօր կանգնած է ֆինանսական մեծ խնդիրների առաջ:

Ընկերությունը, դեռեւս դուրս չեկած կատարած ներդրումների պարտքի տակից, նոր պարտքեր է «շալակում»: Եվ եթե այսպես շարունակվի՝ կսնանկանա: Պատճառն այն է, որ նախընտրական այս շրջանում «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, անունը բարեգործություն դնելով, նույն երթուղագծերում «ուսանողականի» անվան տակ հնամաշ 30-40 հատ «պազիկ» ավտոբուսներ է «մտցրել» եւ անվճար ուղեւորափոխադրում է իրականացնում՝ «Կինգ դե լյուքսի» գործին խփելով:

Ընկերությունն այս 1 շաբաթվա ընթացքում արդեն ֆինանսական մեծ վնասներ է կրել: Երեկ Աբովյան քաղաք մեր այցելության ժամանակ նկատեցինք, որ այդ ավտոբուսներից ավելի շատ օգտվում էին մեծահասակներն ու միջին տարիքի մարդիկ, քան՝ ուսանողները: Աբովյանցիների հետ զրույցում պարզեցինք, որ ուզեն-չուզեն՝ պիտի այդ պազիկներից օգտվեն, եւ ոչ թե այն պատճառով, որ անվճար է, այլ, երբ փորձել են օրինական գործող «Բոգդան» ավտոբուսը նստել, ինչ-որ մարդիկ նրանց սպառնալով ստիպել են «պազիկից» օգտվել:

Ի դեպ, բնակիչները պատմեցին, որ այդ «բարեգործական» ավտոբուսները այնքան էլ անվտանգ չեն. օրերս դրանցից մեկի «գազի բալոնը», հենց ավտոկայանում՝ պայթել է, ուղեւորները մի կերպ են հասցրել ավտոբուսից դուրս գալ:

«Բոգդանն» ավելի անվտանգ է ու մաքուր, մենք էլ ենք ուզում հենց «Բոգդանով» երթեւեկել, բայց ԲՀԿ-ի մարդիկ կանգնած հատ-հատ հետեւում են, թե ով նստեց, ով՝ չնստեց: Աբովյանն էլ փոքր քաղաք ա, բոլորն իրար ճանաչում են»,- ասաց մի քաղաքացի՝ չցանկանալով ներկայանալ:

«Առավոտի» հետ զրույցում «Կինգ դե լյուքս» ընկերության ներկայացուցիչը վստահեցրեց, որ այս մեկ շաբաթում, ԲՀԿ-ի բարեգործության պատճառով, մոտ 15 հազար դոլարի վնաս են կրել. «Եթե ուզում են բարեգործություն անել, թող իրենց «Մուլտի գրուպի» արտադրանքները՝ կոնյակներն ու գարեջուրը, ցեմենտը կամ կաթնամթերքը անվճար բաժանեն ժողովրդին, այ, դա իսկական բարեգործություն կլինի: Իսկ մենք հարկային պարտավորվածություն ունենք, եւ, եթե սենց շարունակվի, լրիվ կաթվածահար կլինի մեր ընկերությունը»:

«Կինգ դե լյուքսի» ներկայացուցչի խոսքերով՝ մոտ 4 միլիոն դոլար վարկ են վերցրել՝ ներդրում կատարելու համար: Մեկ տարեկան «Բոգդան» ավտոբուսներ են ներկրել, որպեսզի քաղաքակիրթ սպասարկեն բնակչությանը, բայց քանի որ, ըստ ընկերության պատասխանատուների, պետությունը աչք է փակում այդ ամենի վրա, իրենք չեն կարողանա վարկերը մարել, դեռ մի բան էլ պարտքեր կուտակելով՝ բիզնեսը կկորցնեն. «Մենք լրիվ օրենքի դաշտում ենք, բոլոր մեքենաները գրանցված են, մի հատ ձեւի համար չգրանցած մեքենա կամ չգրանցված աշխատակից չունենք: Ստացվում է՝ նախարարության մրցույթն անիմաստ բան է. դու կարող ես շահել մրցույթը, աշխատել, բայց մի օր մեկը բերի անվճար ավտոբուսներ լցնի ու հստակ մեր երթուղագծով ու նույն ժամերին ու նույն ինտերվալով աշխատի ու քո գործին խփի»:

«Կինգ դե լյուքսի» բախտին են արժանացել նաեւ «Լիոնիդ» եւ «Տրանս- կոմֆորտ» ընկերությունները, որոնք սպասարկում են Աբովյան-Նոր Հաճն, Աբովյան-Բյուրեղավան, Չարենցավան-Երեւան երթուղագծերը:

Ընդ որում՝ այս երթուղագծերի մեքենաների վարորդներին Աբովյանի քաղաքապետը, որը ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկյանի փեսան է, արգելել է Աբովյան քաղաքի ավտոկայարանում կանգառել՝ պատճառաբանելով, որ այդտեղ միայն բարեգործական «պազիկները» կանգնեն:

Նկատենք, որ մի քանի ամիս առաջ կառավարությունը որոշում կայացրեց, որ միջքաղաքային եւ միջմարզային ավտոբուսները պետք է կանգ առնեն միայն ավտոկայարաններում:

Աբովյանցիները մեզ հետ զրույցում այս ամենի վերաբերյալ հետեւյալ տեղեկությունները ունեին. «Գագիկ Ծառուկյանը տեղեկացել է, որ գծատերերը ուզում են դառնալ հանրապետական, դրա համար էլ որոշել է ամեն գնով «նեղել» նրանց: Էդ անվճար «պազիկների» վարորդներին ամիսը 1,500 դոլար փող ա տալիս, էլ չենք ասում, որ էն մարդկանց, որոնք էդ ավտոբուսների կողքը կանգնած գոռում են՝ անվճար ավտոբուս ու մարդկանց ստիպում են նստել հենց էդ «պազիկները», ամիսը մի 500 դոլար էլ դրանց են տալիս»: Աբովյանցիների պատմելով, ավելին՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը Աբովյանում այս օրերին տուն առ տուն, «օֆիս առ օֆիս» է մտնում ու կուսակցության մանդատներ է բաժանում. «Զոռով ստորագրել են տալիս ու իրենց մանդատը թողում՝ գնում: Չենք էլ կարող հրաժարվել, մի տղայի արյունլվա էին արել՝ հրաժարվելու համար»:

«Առավոտի» հարցին, թե արդյոք օրինակա՞ն է մրցույթը շահած երթուղագծին զուգահեռ տրանսպորտի անվճար ծառայություն մատուցել, հատկապես հաշվի առնելով, որ տնտեսվարողը բարեխիղճ հարկատու է եւ վնասներ է կրում, տրանսպորտի եւ կապի նախարարությունից վստահեցրին, որ դա արվում է բարեգործական նպատակով եւ այն օրենքով չի կարգավորվում: Բայց «Կինգ դե լյուքս» ընկերության դիմումը ներկայումս նախարարությունում քննարկվում է, եւ ինչպես տեղեկացրին նախարարությունից, առաջիկայում կպարզեն խնդրի էությունը:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

## Ի գիտություն հասարակության

«Երեւան Ջուր» ՓԲԸ-ն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով է ներկայացրել 2012-2013թթ. ջրամատակարարման, ջրահեռացման եւ կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման համար առաջարկվող սակագների ճշգրտված հաշվարկները.

ա/ սպառողներին խմելու ջրի մանրածախ մատակարարման, ջրահեռացման եւ կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման գործող սակագինը կազմում է 174.065 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ): Ճշգրտված սակագինը՝ 176.082 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ),

բ/ սպառողներին խմելու ջրի մեծածախ ծառայությունների մատուցման գործող սակագինը կազմում է 14.533 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ): Ճշգրտված սակագինը՝ 15.296 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ),

գ/ սպառողների մեծածախ ջրահեռացման եւ կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման գործող սակագինը կազմում է 30.588 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ): Ճշգրտված սակագինը՝ 31.660 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ),

դ/ «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւան մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերությանը ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման գործող սակագինը կազմում է 8.957 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ): Ճշգրտված սակագինը՝ 9.071 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ):

ԳՈՌ ԳՐԻԳՈՐՅԱՆ
գլխավոր տնօրեն

# Նոր առաջարկ Beeline-ից

## «Խոսող SMS» ծառայությունը հնարավորություն է ընձեռում ուղարկել ձայնային հաղորդագրություններ Beeline ֆիքսված կապի բոլոր համարներին ողջ երկրում

«ԱրմենՏել» ընկերությունը հայտարարում է «Խոսող SMS» ծառայության աշխարհագրության ընդլայնման մասին: Այժմ Beeline բջջային կապի բաժանորդները կարող են ուղարկել SMS հաղորդագրություն ինչպես Երեւան քաղաքի, այնպես էլ Հայաստանի բոլոր շրջանների Beeline ֆիքսված հեռախոսակապի բաժանորդներին:

«Հաշվի առնելով Երեւան քաղաքում մեր հաջող փորձը՝ մենք որոշեցինք ընդլայնել «Խոսող SMS» ծառայության աշխարհագրությունը եւ հնարավորություն ընձեռել մեր բաժանորդներին շարժական կապի ավանդական ծառայությունից օգտվել նաեւ ֆիքսված հեռախոսներից: Թող «Խոսող SMS» ծառայությունը մեր բաժանորդների շփումը դարձնի ավելի հարմարավետ եւ հաճելի»,- նշեց «ԱրմենՏել» ՓԲԸ գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն:

Ֆիքսված հեռախոսակապի համարին հաղորդագրություն ուղարկելը նման է բջջային հեռախոսով հաղորդագրություն ուղարկելուն. բաժանորդը պետք է մուտքագրի քաղաքային հեռախոսահամարը, գրի հաղորդագրությունը եւ այնուհետեւ ուղարկի: Ֆիքսված կապի բաժանորդի հեռախոսահամարին կատարվում է զանգ՝ ստացված հաղորդագրության մասին տեղեկատվությամբ: Ֆիքսված կապի բաժանորդը լսում է հաղորդագրությունը եւ ցանկության դեպքում կարող է ուղարկել պատասխան ձայնային հաղորդագրություն: Բջջային կապի բաժանորդը ստանում է ծանուցում պատասխան հաղորդագրության մասին, որը կարող է լսել՝ զանգահարելով 8008 կարճ համարին: SMS հաղորդագրությունն ուղարկելու համար բջջային կապի բաժանորդին անհրաժեշտ է հեռախոսահամարը նշել հետեւյալ եղանակով՝ 010XXXXXX կամ 37410 XXXXXX:

SMS հաղորդագրությունը ֆիքսված կապի բաժանորդին ուղարկելու համար կարող է գրվել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ օգտագործելով կիրիլիկ կամ լատինական տառատեսակները: Մեկ SMS հաղորդագրության արժեքը քաղաքային համարին կազմում է 100 դրամ, իսկ ելքային զանգի մեկ րոպեի արժեքը 8008 կարճ համարին՝ 90 դրամ: SMS հաղորդագրության լսելը եւ պատասխան հաղորդագրության ուղարկելը ֆիքսված կապի բաժանորդների համար անվճար է:

Ֆիքսված կապի հեռախոսահամարին զանգերը կատարվում են բացառապես ժամը 8:00-ից մինչեւ 22:00-ը ընկած ժամանակահատվածում: Եթե SMS հաղորդագրությունն ուղարկվում է ժամը 22:00-ից հետո, ապա բջջային կապի բաժանորդը ստանում է տեղեկատվություն, որ իր հաղորդագրությունը կուղարկվի առավոտյան ժամը 8:00-ին: Ավելի մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ www.beeline.am կայքում:

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 23.02.2012

# «Ծնայսի սանիկի» մեքենայով վկային տարել են բաժին

## Անալյա Ալյազի Մամոյանը գտնում է, որ որպես ՀՀ քաղաքացի, որպես կին, խախտվել են իր իրավունքները

Անալյա Մամոյանն իր ծանոթ Կարեն Առաքելյանի մոր՝ Ալվարդ Առաքելյանի հաղորդումով Երեւանի ոստիկանության Շենգավիթի բաժնում 2011թ. հունիսից քննվող թիվ 11124611 քրեական գործով ներգրավվել է որպես վկա: «Այդ օրվանից մինչեւ հիմա ինձ ոստիկանները «տանում-բերում» են եւ հարցաքննում են: Բողոքի հիմք է հանդիսանում այն, թե իբր 2009թ.-ին Կարեն Առաքելյանից վերցրել եմ 30 հազար ԱՄՆ դոլար՝ սեփականությամբ մորս պատկանող, Երեւանի Մանթաշյան 4/2, 10 հասցեի բնակարանն իրենց վաճառելու նպատակով: Մատնանշում են նաեւ, թե նշված գումարը ինձ են տվել մեր տանը՝ մորս ներկայությամբ: Իրականում նման բան չի եղել, քանի որ նշված բնակարանը ես կամ մայրս վաճառելու նպատակ երբեւէ չենք ունեցել եւ նման խոսակցություն մեր միջեւ չի եղել»,- ասում է Ա. Մամոյանը:

Ըստ Ա. Մամոյանի, դիմումներ է ուղարկել ՀՀ նախագահին եւ ազգային անվտանգության ծառայության տնօրեն, գեներալ-գնդապետ Գորիկ Հակոբյանին, որում տեղեկացնում է կատարվածի մասին, նշելով, որ իր նկատմամբ ակնհայտ շանտաժ է տեղի ունենում. «Կարեն Առաքելյանը շանտաժի միջոցով փորձում է ինձնից կորզել խոշոր չափի գումար՝ իր խոսքերով, հույսը դնելով նրա վրա, որ ինքը հանդիսանում է «Ծնայսի սանիկը» եւ ոչ մի տեղ, ոստիկանության մարմիններում խնդիր չունի, քանի որ իր թիկունքին այնպիսի մարդ է կանգնած, որի դեմ խաղ չկա: Նա ասում է, որ ինքը ինչպես ցանկանա, այդպես էլ կլինի, քանի որ ես ազգությամբ եզդի եմ, անգրագետ եւ ոչինչ չեմ հասկանում»:

Ա. Մամոյանը մեր զրույցի ժամանակ հայտնեց, որ 2012թ. հունվարի 28-ին՝ առեւտուր անելու նպատակով, 1 շաբաթով փորձել է գնալ Ստամբուլ, «Բավրա» սահմանային կետում նույն օրը, ժամը 17:00-ի սահմաններում, ոստիկանության աշխատակիցները նրան իջեցրել են Երեւան-Ստամբուլ ուղերթի ավտոբուսից եւ տեղափոխել ոստիկանության Աշոցքի բաժին: Այնտեղից էլ Շենգավիթի ոստիկանության բաժին է տեղափոխել Երեւանից եկած բողոքաբեր Կարեն Առաքելյանը՝ իրեն պատկանող «ՆԻՎԱ» մակնիշի 20 LS 405 ￼պ/հ-ի ավտոմեքենայով: «Ճանապարհին Կարեն Առաքելյանն ինձ դիմելով՝ ասաց. «տեսա՞ր՝ ես որեւէ պրոբլեմ չունեմ, բոլորին առել եմ, ինչ ուզեմ՝ կանեմ»:

Ոստիկանության Շենգավիթի բաժին հասնելուց հետո Կարեն Առաքելյանն իր մեքենայով հեռանում է, իսկ Անալյային տանում են քննիչ Տիգրան Հովհաննիսյանի աշխատասենյակ: «Միեւնույն է՝ դու դատվելու ես, խոստովանական ցուցմունք տուր, թե չէ՝ կձերբակալենք, կապ չունի, թե վկա ես»,- ասում է քննիչը՝ վկայից վերցնելով նրա անձնագիրը: Շուրջ 11 ժամ անազատության մեջ մնալուց հետո, քննիչ Տիգրան Հովհաննիսյանը վկային բաց է թողնում: «Ամեն գնով փորձում են իմ դեմ «գործ սարքել», ինչից հետեւում է, որ Կարեն Առաքելյանի կողմից արված հայտարարությունները իրական են, եւ քանի դեռ այս գործը քննվելու է ոստիկանության Շենգավիթի քննչական բաժնում՝ ճշմարտությունը չի բացահայտվելու, եւ Կարեն Առաքելյանն ու նրան օժանդակող ոստիկանները գործելու են օրենքի սահմաններից դուրս»,- ասում է տիկին Անալյան:

Նա դիմում է ՀՀ նախագահին, ՀՀ ազգային անվտանգությանը, «Առավոտին», որպեսզի ոստիկանության Շենգավիթի քննչական բաժնում քննվող թիվ 11124611 քրեական գործի քննությունը տեղափոխվի ցանկացած այլ քննչական մարմին, քանի որ, ըստ նրա, Շենգավիթի քննչական բաժնի աշխատակիցները սույն գործով չեն կարող անկողմնակալ եւ օբյեկտիվ քննություն կատարել: Դրանով միաժամանակ կկանխվի Կարեն Առաքելյանի եւ ոստիկանության աշխատակիցների պտօրինի համագործակցության արդյունքում հնարավոր մեղադրանքի առաջադրումը:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Հ. Գ. Ի դեպ, նյութը պատրաստ էր հրապարակման, երբ եզդի կնոջ պաշտպանը՝ ՀՀ փաստաբանների պալատի անդամ Ստեփան Ոսկանյանը «Առավոտին» տեղեկացրեց, որ Անալյա Մամոյանը երեկ կանչվել է ոստիկանության բաժին: Փոխվել է նրա կարգավիճակը. վկայից դարձել է կասկածյալ եւ որ նրա նկատմամբ ընտրվել է խափանման միջոց՝ ստորագրություն քաղաքից չբացակայելու մասին: Ի դեպ, պաշտպանը քննչական խմբին անվստահություն է հայտնել, քանի որ խմբի կազմում են նախկին ու ներկա քննիչները: Մեր տրամադրության տակ կա նաեւ տեսանյութ, թե ինչպես են հունվարի 28-ին նախկին վկային պտօրինի բերման ենթարկել ոստիկանության բաժին:



### Պետք չէ արատավորել

«Facbook» սոցիալական ցանցի «Խոսքի իրավունք միավորման» հիմնադիր խմբի անդամ Հակոբ Սանթրոսյանը, երեկ ի պատասխան Մենուա Հարությունյանի կարծիքի, թե Մաշտոցի պուրակի համար պայքարողները գրանտակերներ են, «Առավոտին» ասաց. «Այդ բառը մեր հասարակությունում վերջերս ստացել է խիստ բացասական երանգ: Մարդուն անվանել գրանտակեր՝ նշանակում է շեղել հասարակության ուշադրությունը նրա գործի բուն էությունից եւ արատավորել: Այդ նույն դրամաշնորհներն իրականում ստանում են նաեւ իշխանությունները: Ամեն օր տարբեր ոլորտի պաշտոնյաները կարծես քնից արթնանում եւ հասկանում են, որ այս կամ այն նորամուծությունը պետք է արվի իրենց ոլորտում: Օրինակ՝ կրթության եւ այլ ոլորտներում: Այդ բարեփոխումներն արվում են, քանզի միջազգային կազմակերպություններից շահել են դրամաշնորհներ: Սակայն նրանց չեն կպցնում տարբեր պիտակներ: «Խոսքի իրավունք միավորումը» անձնական շփումներ քիչ է ունեցել տարբեր կազմակերպությունների հետ եւ չգիտի, թե ով, որքան եւ ինչու է ստանում գրանտ: Սակայն գտնում է, որ բնության պահպանումը ազնիվ գործ է եւ պետք չի այն արատավորել: Մտածելու տեղիք է տալիս այն մարդկանց պահվածքը, ով այդ նախաձեռնություններին դեմ է արտահայտվում»:

# Ափսոս, Տարոն

Մաշտոցի այգին շինհրապարակ դարձնելը հասարակական մեծ ընդվզում է առաջացրել: Շինհրապարակն էլ այնպիսին է, որ բազմամյա ծառերին կիպ-կպած, կանաչ տարածքներում շինություններ են կառուցվում, այն դեպքում, երբ քաղաքաշինական նորմերի համաձայն՝ շինության արտաքին պատի հեռավորությունը ծառի բնից պետք է լինի առնվազն 5 մետր, կամ հայտարարվում է, որ տարածքը կանաչ գոտի չէ, բայց այդ դեպքում ո՞րն է կանաչ գոտին, չէ որ, ըստ քաղաքաշինական նորմերի, յուրաքանչյուր անձի հաշվարկով առնվազն 6 քմ կանաչ տարածք պետք է լինի, Փոքր Կենտրոնում ո՞րն է կանաչ գոտին, կա՞ այդպիսին:



Հարցեր են, որոնց այդպես էլ չպատասխանեց քաղաքապետը, որպես արդարացման փորձ նշելով՝ որ. «այգում տեղադրվում են տաղավարներ՝ Աբովյան փողոցի պտամոնտաժված հիմնական շինությունների սեփականատերերին որպես փոխհատուցում տրամադրելու համար»:

Ինչ է ստացվում, ունքը սարքում ենք՝ աչքը հանելո՞վ: Քաղաքապետը նաեւ հայտարարում է, որ. «Հասել է տվյալ քննարկումներն առարկայական դաշտ տեղափոխելու պահը՝ իրար հետ ողջամիտ փաստարկներ փոխանակելու, դրանք ծանրութեթեւ անելու եւ հասարակական փոխըմբռնման հասնելու համար»: Ինչպե՞ս հավատամ նման ցանկությանը, չէ՞ որ այդ հայտարարությունն անում է մի քաղաքապետ, ով գիշերով թաքուն իրականացրեց շինարարությունը՝ ձիով քայլ կատարելով իր համայնքի բնակչության հանդեպ, ով հրաժարվեց ընդունել իրեն այցելած բնապահպաններին եւ վերջապես մերժեց այգի այցելելու եւ ողջամիտ փաստարկներ փոխանակելու բնապահպանների բազմաթիվ հրավերները:

Ափսոս:

ԿԱՐԵՆ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ
փաստաբան

# Դեկոլտեով, հաստ շղթայով նոտարներ չենք ունենալու

Երեկ «Արմենպրեսի» մամուլի սրահում արդարադատության նախարարի տեղակալ Արամ Օրբելյանը, ներկայացնելով նոտարիատի ոլորտի եւ պետական ռեգիստրում կատարված բարեփոխումները, վստահեցրեց, որ մեր երկրին պետք են ոչ թե միայն «կնիք դնող» նոտարներ, ինչպես որ մինչ այժմ եղել է, այլեւ, ըստ փոխնախարարի, նոտարը մի մարդ է, ով մատուցում է իրավաբանական ծառայություններ. «Այսինքն՝ մենք պետք է դիտենք նոտարին որպես անձի գույքային իրավունքները պաշտպանելու եւս մեկ մեխանիզմ, որը պետք է աջակցի արդարադատության իրականացմանը: Եվ նոտարի հիմնական գործառույթը պետք է լինի օգնել բեռնաթափել դատարանները՝ կնքելով ճիշտ պայմանագրեր, որոնք խնդիրներ չեն առաջացնի»:

Պարոն Օրբելյանի խոսքերով, նորաստեղծ վերահսկողության տեսչությունն էլ բողոքների կամ ընթացիկ ստուգումների հիման վրա հայտնաբերած օրինախախտ նոտարների գործերը կուղարկի նոտարական պալատ, որը գործում է արդարադատության նախարարությունից առանձին: Այդ տեսչության հայտնաբերած խախտումների հիման վրա անցյալ տարի 4 նոտար արդեն պատասխանատվության է ենթարկվել:

Փոխնախարարը, քաղաքացիների բողոքների քանակությունից դատելով, հասկացել է, որ նոտարներից դժգոհությունները նվազել են, այդուհանդերձ, պարոն Օրբելյանը վստահեցրեց, որ սկսած նոտարների հագուկապից, քաղաքացիների հետ վարվեցողությունից, նոտարները «բարեփոխվել» են. «Այլեւս չենք ունենալու կես մետրանոց դեկոլտեով, կես մետրանոց եղունգներով, 3 կիլոգրամ ոսկեղենով ու հաստ շղթայով նոտարներ: Եթե նախանցած տարի որեւէ լրատվամիջոց փորձեր մտնել նոտարական գրասենյակ եւ այնտեղից կարողանար կենդանի դուրս գար եւ առանց վնասվածքների, ուրեմն բախտավոր մարդ կլիներ այդ լրագրողը: Անցյալ տարվա ընթացքում մի շարք հարցազրույցներ են վերցվել, այդ թվում՝ նրանց համար ոչ հաճելի թեմաներով եւ բոլորը նորմալ տվել են հարցազրույցները»:

Պետական ռեգիստրում կատարված բարեփոխումների արդյունքում՝ ներդրվել է 1 պատուհանը, որը էլեկտրոնային լինելով, հնարավորինս հեշտացրել է բիզնեսի եւ այլ ծառայությունների գրանցման հարցը:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂՅԱՆ

### Սպանել էր բռունցքներով

ՀՀ ոստիկանությունից «Առավոտին» տեղեկացրին, որ փետրվարի 21-ին շտապօգնությունից ոստիկանության Էրեբունու բաժնում ահազանգ է ստացվել, որ Նուբարաշեն թաղամասի տնակներից մեկի մերձակայքում տղամարդու դիակ է հայտնաբերվել:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը 45-ամյա Լյովա Ապրոյանին պատկանող կիսակառույց տնակի մոտ հայտնաբերել է 45-ամյա Գրիգոր Հաջի-Պողոսյանի դիակը՝ բռնության հետքերով: Նույն օրը ոստիկանության ծառայողները Նուբարաշենի Ա-2 թաղամասից բերման են ենթարկել Լյովա Ապրոյանին. Նա խոստովանել է, որ փետրվարի 20-ի երեկոյան, ժամը 19-ի սահմաններում, տանը, ոգելից խմիչքի ազդեցության տակ, վիճաբանել է Գրիգոր Հաջի-Պողոսյանի հետ եւ բռունցքներով հարվածներ հասցրել նրա դեմքին ու գլխին: Ապրոյանը ձերբակալված է: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Սեփ. լր.

# Նախկին տնօրենը դատի է տվել ոստիկանությամբ սպառնացող ՀՀԿ-ական տնօրենին

Երեւանի Ս. Հովսեփյանի անվան 115 դպրոցի նախկին տնօրեն Աիդա Մնացականյանը դատի է տվել ԿԳ նախարարությանը եւ դպրոցի նորընտիր տնօրեն, ՀՀԿ անդամ Գոհար Անտոնյանին: Նա պահանջում է անվավեր ճանաչել տնօրենի անցյալ տարվա հունվարի 1-ի հրամանը, վերականգնվել նախկին պաշտոնում, իր հետ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը դարձնել անորոշ ժամկետով եւ թույլատրել աշխատել որպես հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ: Տիկին Մնացականյանն ակնկալում է, որ դպրոցն իրեն կվճարի նաեւ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ: Ա. Մնացականյանը «Առավոտին» հայտնեց, որ դատարան դիմելուց առաջ փորձել է հանդիպել ԿԳ նախարար Արմեն Աշոտյանին, սակայն չի հաջողվել, մի քանի անգամ դիմել է Աշխատանքի տեսչություն: Տիկնոջը հատկապես զայրացրել է այն, որ նորընտիր տնօրեն Գոհար Անտոնյանը դպրոցի պահակին ոչ միայն հրահանգել է իրեն ներս չթողնել, այլեւ սպառնացել է ոստիկանություն զանգել, եթե չլքի դպրոցի տարածքը:

Նշենք, որ Աիդա Մնացականյանը 1998 թվականից աշխատել է Ս. Հովսեփյանի անվան թիվ 115 դպրոցի տնօրեն, նրա 65 տարին լրացել է անցյալ տարվա մարտի 15-ին: «Առավոտի» հետ զրույցում նա ասաց, որ անցյալ տարվա ապրիլի 1-30-ը մասնակցել է ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) քննությանը նախորդող վերապատրաստման 99-ժամյա դասընթացին, ապա քննություններին ու ստացել համապատասխան հավաստագիր: Վերջինս իրավունք է տալիս մասնակցել ուսումնական հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթին եւ ուժի մեջ է մինչեւ 2016 թվականի հուլիսի 7-ը: Տիկին Մնացականյանը հղումներ անելով Սահմանադրության մի քանի հոդվածների, նշում է, որ չնայած իր 65 տարին լրացել է, սակայն աշխատանք ընտրելու իրավունքը պետք է երաշխավորված լինի բոլորի համար՝ անկախ տարիքային սահմանափակումներից, եւ իր պարագայում խտրականություն է դրսեւորվել: Նրա խոսքով, իրեն թույլատրել են ղեկավարման իրավունքի քննությանը մասնակցել մի պայմանով, եթե ստորագրի, որ հրաժարվում է մասնակցել տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթին, ինքն էլ ստիպված ստորագրել է:


Աիդա Մնացականյանը մինչեւ վերջ կպայքարի իր իրավունքների համար:

«Երբ գնացի հավաստագրման դասընթացներին, զարմացան, թե ինչու եմ եկել, ասացի՝ ուզում եմ... Մտածում էի, որ 65 տարեկան տնօրենին չի կարելի հանել, ի՞նչ է՝ հենց մարդու 65-ը լրանում է, անխելքանո՞ւմ է, ամեն ինչ վերջանո՞ւմ է: 65 տարին նրա համար է, եթե մարդը ուզենա՝ գնա, բայց դա պարտադիր չէ: Մարդը կարող է աշխատել, եթե ամուր է, առողջ ու այլ պատճառ չկա»,- պատմեց մեր զրուցակիցը: Նա հավելեց, որ անցյալ տարվա օգոստոսի 1-ին ԿԳՆ աշխատակազմի ղեկավարն իր մոտ է կանչել ու իրեն առաջարկել աշխատանքից ազատվելու մասին դիմում գրել, իսկ ինքը, ի տարբերություն 65 տարին լրացած մյուս տնօրենների, հրաժարվել է. «Ասացի ինձ աշխատանքից հանե՛ք, եթե ժամկետս լրացել է, բայց ես դիմում չեմ գրի, իրենք էլ ինձ թույլ տվեցին աշխատել մինչեւ 2011-ի սեպտեմբերի 20-ը»: Այսպիսով, նրան ձեւակերպել են կես դրույքով փոխտնօրեն եւ հայերենի դասաժամեր տվել մեկ դասարանում, սակայն հետագա մանկավարժի գործունեությունը հարթ չի ընթացել:

Տիկին Մնացականյանն ափսոսում է, որ իրենց դպրոց «դրսից» են տնօրեն բերել, մինչդեռ իրենց երկու ուսուցիչ՝ Քնարիկ Հայրապետյանն ու Մարինե Քալաշյանը, տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթների են մասնակցել ու այլ դպրոցներում տնօրեն ընտրվել:

Նախկին տնօրենը պնդում է, որ իր հաջորդը «վերեւից» հովանավորվում է կուսակցական պատկանելության շնորհիվ, իսկ նրա բոլոր թերությունները կոծկվում են, դպրոցում էլ անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտ է տիրում: Ա. Մնացականյանի պնդմամբ, տնօրենը դիտմամբ այնպիսի պայմաններ էր ստեղծել, որ ինքը տապալվի, իսկ 2011-ի դեկտեմբերի 1-ին դպրոցի 23 դասարաններից մեկը կամայականորեն կրճատել է, որպեսզի փոխտնօրենի կես դրույքով իր հաստիքը մեխանիկորեն «մեջտեղից» դուրս գա: Աիդա Մնացականյանը Գոհար Անտոնյանի՝ իր կարծիքով մի շարք անօրեն որոշումներ ու արարքներ վկայակոչեց, որոնցից ոչ բոլորը լրագրային տարածքի սղության պատճառով կարողացանք հրապարակել:

Տիկին Մնացականյանը խնդրեց հոդվածում նշել, որ ինքը դատարան է դիմել բոլոր այն տնօրենների անունից, որոնց իրավունքները ոտնահարվել են, բայց ինչ-ինչ պատճառներով չեն համարձակվում բարձրաձայնել այդ մասին:

«Առավոտը» կապվեց նաեւ Ս. Հովսեփյանի անվան 115 դպրոցի ներկայիս տնօրեն Գոհար Անտոնյանի հետ: Տիկին Անտոնյանը հեռախոսով փոխանցեց, որ ձեռնպահ է մնում մեկնաբանություններից, քանի որ գործը դատական փուլում է, խոստանալով խոսել դատարանի վճռից հետո: Մնացականյանի պնդմանն էլ, թե ՀՀԿ անդամ լինելու համար ինքը հովանավորվում է, տնօրենը չհամաձայնեց:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

## Շտեմարանները կթեթեւացնեն ուսուցչի գործը

Արդեն պատրաստ են քննական առաջադրանքների շտեմարանները: Դրանք (մասնագիտության բերումով՝ նկատի ունեմ հայոց լեզու եւ գրականություն առարկայի առաջադրանքների շտեմարանները) առաջին հերթին օգնություն են V-XII դասարաններում դասավանդող ուսուցիչներին՝ խելամտորեն կազմակերպելու մայրենի լեզվի եւ գրականության ուսուցումը, գործնականորեն ուսուցանելու դասավանդվող առարկայի առանձնահատկությունները, զարգացնելու երեխաների մտածելակերպը, եզրահանգելու կարողությունները: Յուրաքանչյուր ուսուցիչ, սկսած I դասարանից մինչեւ XII դասարան, պետք է քաջատեղյակ լինի պետական ծրագրերին, այնպես էլ ԳԹԿ-ի կողմից հրատարակվող ուղեցույցներին, սեփականի դրանց բուն էությունը եւ դրանց համապատասխան՝ ծավալի նպատակաուղղված գործունեություն. այն է՝ դասուսուցումը կազմակերպի՝ ձեռքի տակ ունենալով իր ստեղծագործական աշխատանքը թեթեւացնող գործնական աշխատանքների շտեմարաններ:

Այսպես. V դասարանում հնչյունաբանություն թե բառագիտություն, VI-IX դասարաններում ձեւաբանություն թե շարահյուսություն, X-XII դասարաններում V-IX դասարաններում անցածի կրկնություն՝ իրենց բոլոր առանձնահատկություններով, բոլորը սերտորեն միմյանց հետ կապված, միմյանցով պայմանավորված, ուսուցանելիս, խնդրեմ, ուսուցիչը շտեմարաններից թող ընտրի համապատասխան առաջադրանքներ՝ տարաբնույթ պահանջներով: Հենց դրանց վերլուծությամբ եւ համադրությամբ ուսուցիչը կկարողանա զարգացնել աշակերտի՝ կարդացած պահանջը հասկանալու եւ դրա ճիշտ պատասխանը որոշելու կարողությունը:

ԼՅՈՒԲԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ստ. Զորյանի անվան թիվ 56 դպրոցի հայոց լեզվի եւ հայ գրականության ուսուցչուհի

# Մաշտոցի այգու բարեկարգումը քաղաքապետարանի ծրագրերում է

Աբովյան փողոցից Մաշտոցի պուրակ տեղափոխված տաղավարների սեփականատերերի հետ Երեւանի քաղաքապետարանը պայմանագիր է կնքել դեռեւս 4-5 տարի առաջ, եւ այդ պայմանագրերի ժամկետը դեռեւս ավարտված չէ: Անդրադառնալով տաղավարների վայրի փոփոխությանը եւ վերջին օրերին ամենաշատ քննարկվող հարցին՝ Մաշտոցի պուրակ տեղափոխված տաղավարներին, ասաց Երեւանի քաղաքապետարանի ֆինանսավարկային եւ տնտեսական հանձնաժողովի նախագահ Նաիրա Նահապետյանը: Տիկին Նահապետյանը հետեւյալ բացատրությունները ներկայացրեց. «Երբ մենք սկսեցինք կրպակների տեղահանումը, առաջին հարցը, որ մենք ուսումնասիրեցինք, այն էր, որ պայմանագրի ժամկետը չավարտված տաղավարների սեփականատերերին պետք է համապատասխան տեղ հատկացնեինք, եւ դրանք շարունակեին գործել: Մենք կարողացանք սեփականատերերի հետ համաձայնության գալ, եւ նրանք էլ տարածքը ազատեցին: Ամենահարմար տեղը, որը մենք պետք է առաջարկեինք նրանց՝ Մաշտոցի պուրակն էր, հո այդ մարդկանց իրենց սեփականությունից չէի՞նք զրկելու, մարդը ներդրումներ է արել, գումար է ծախսել, իր սեփականությունն ունի, ի՞նչ պետք է անեինք:



Օրենքի շրջանակներում լուծումը մեկն էր. քաղաքապետարանը պետք է փոխհատուցեր, այսինքն՝ տվյալ տաղավարները գնեինք իրենցից եւ հարցը փակեինք, երկրորդ տարբերակն էլ համարժեք ժամանակավոր տեղ գտնելն էր տաղավարների տեղադրման համար: Այսինքն՝ մինչեւ «Հին Երեւան» ծրագիրը սկսի աշխատել, այդ տաղավարները պետք է մնան Մաշտոցի պուրակում: Ես էլ Երեւանի էկոլոգիական վիճակից առանձնապես գոհ չեմ, իհարկե՝ կանաչ տարածքները պետք է շատացնենք, դա բոլորիս ցանկությունն է, քանի որ մեր երեխաները մեծանում են այս քաղաքում: Բայց մենք չպետք է մոռանանք, որ մարդիկ ունեն սեփականություն, եւ մենք պարտավոր ենք հարգել նրանց իրավունքները կամ օրենքի շրջանակում լուծումներ առաջարկենք:

Այժմ քաղաքապետարանի առաջարկած լուծումը եւ այդ տաղավարների ժամանակավոր տեղափոխությունը մեզ համար համարվում է ամենաօպտիմալ տարբերակը, քանի որ Երեւան քաղաքը այդպիսի բյուջե չունի, որպեսզի տաղավարների սեփականատերերին միանգամից փոխհատուցում տա, եւ նրանք էլ իրենց տաղավարները վերացնեն: Ես ուղղակի խնդրում եմ, որ Մաշտոցի այգու «պաշտպանները» հարգեն մարդու սեփականության իրավունքը եւ կարողանան մինչեւ պայմանագրի ժամկետի լրանալը կամ «Հին Երեւան» ծրագրի մեկնարկը համբերատար լինել: Ես այս ամենն ասում եմ որպես այս քաղաքի խնդիրներով մտահոգ քաղաքացի:

Պետք է նշեմ, որ քաղաքի մյուս հատվածներում էլ գտնվող կրպակները հանվել են այն ժամանակ, երբ Երեւանի քաղաքապետարանի հետ նրանց պայմանագրերի ժամկետները լրացել են, օրինակ՝ այժմ Մոսկովյան փողոցի վրա կան կրպակներ, որոնց պայմանագրերի ժամկետը լրանալու է 2015թ., իսկ այժմ այդ կրպակներն իրենց տեղում են, ոչ ոք չի կարող իրենց տեղերից հանել, քանի որ այն կլինի օրենքի շրջանակներից դուրս, վաղաժամկետ կարող են հանվել այն դեպքում, երբ դու կարող ես փոխհատուցել:

Բնապահպանների մտահոգությունը ես իսկապես կիսում եմ, քանի որ այն ոչ միայն Երեւան քաղաքին է վերաբերում, այլ նաեւ կանաչ գոտիների պահպանմանը բոլոր քաղաքներում: Այս ծրագրերն էլ քաղաքապետարանի կողմից շարունակական բնույթ են կրելու: Այս օրերի ընթացքում այդքան շատ, կարծում եմ՝ նաեւ արհեստականորեն, շահարկվեց քաղաքապետ Տարոն Մարգարյանի անունը, ում հանիրավի կապում են այդ ամենի հետ, սակայն այդ կրպակները տեղադրվել են 4-5 տարի առաջ: Կցանկանայի շեշտել, որ Աբովյան փողոցը վերադարձվեց երեւանցիներին, ինչը այս պատմության մեջ դրական ձեռքբերումներից էր, որը, չգիտես ինչու, հետեւողականորեն անտեսվում է: Մաշտոցի այգու այդ հատվածը բարեկարգված չէր եւ անմխիթար վիճակում էր, այգու բարեկարգումն էլ քաղաքապետարանի առաջիկա ծրագրերի մեջ է մտնում»:

ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

VivaCell MTS

# ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Պատրաստվում են «Չելենջ տրոֆի» մրցաշարին



Հանդբոլի Հայաստանի կանանց ազգային հավաքականն այս տարի հանդես է գալու «Չելենջ տրոֆի» մրցաշարում, որն իր նշանակությամբ երկրորդն է Եվրոպայի առաջնությունից հետո:

Արդեն որոշվել են մրցավայրն ու մեր աղջիկների մրցակիցները: Մարտի 21-26-ը Բուլղարիայի Գաբրովո եւ Վելիկո Տերնովո քաղաքներում հյուրընկալվելու են «A» եւ «B» խմբերի մրցաշարերի մասնակիցները: Առաջինում ընդգրկվել են Ֆարերյան կղզիները, Իսրայելը, Էստոնիան եւ Մալթան, երկրորդում՝ Բուլղարիան, Լատվիան, Մոլդովան եւ Հայաստանը:

Հայաստանի հանդբոլի ֆեդերացիայի մամուլի ծառայությունը տեղեկացնում է, որ այս տարի մրցաշարի մրցակարգը փոխվել է: Սկզբում թիմերը խաղալու են խմբի իրենց մրցակիցների հետ, որից հետո ուժերը չափելու են մյուս խմբում միեւնույն տեղն զբաղեցրած ընտրանու հետ: Մեր աղջիկները մարտի 22-ից 24-ը հաջորդաբար հանդիպելու են Լատվիայի, Բուլղարիայի եւ Մոլդովայի հետ, իսկ հաջորդ օրը կհանդիպեն երկու խմբերի համապատասխան տեղերն զբաղեցրած հավաքականները:

Մրցաշարին նախապատրաստվող մեր կանանց ազգային հավաքականը, մարզիչ Աստղիկ Գյուրջինյանի ղեկավարությամբ, մարզվում է Երեւանի տնտեսագիտական համալսարանի, Շենգավիթի եւ Արաբկիրի մարզադպրոցների դահլիճներում:

## Հանդբոլիստներին լուրջ փորձություն է սպասվում

Հայաստանի հանդբոլի ֆեդերացիայի մամուլի ծառայությունը տեղեկացնում է, որ մինչեւ 18 տարեկանների մեր հավաքականին մարտի 31-ին եւ ապրիլի 1-ին Բելգրադում լուրջ փորձություն է սպասվելու:

Մեր ընտրանին այդ օրերին Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի 10-րդ խմբում հանդիպելու է սերբերի եւ բելգիացիների հետ: Հավաքականն այս օրերին, մարզիչ Արմեն Գեւորգյանի ղեկավարությամբ, նախապատրաստվում է Ռուս-Սլավոնական (հայկական) համալսարանի եւ Արաբկիրի մարզադպրոցի դահլիճներում: Իսկ հավաքականի մի խումբ վանաձորցի հանդբոլիստներ, Արարատ Բարսեղյանի ղեկավարությամբ, մարզվում են Վանաձորի մարզապալատում:

## Արթուր Աբրահամի մրցակիցն է Պյոտր Վիլշեւսկին

Գերմանիան ներկայացնող հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ, IBF վարկածով աշխարհի նախկին չեմպիոն Արթուր Աբրահամի առաջիկա մենամարտը նախանշված է մարտի 31-ին, Գերմանիայի Քիլ քաղաքի «Sparkassen-Arena» մարզահամալիրում: Ըստ Արթուր Աբրահամի մամլո խոսնակի հաղորդագրության, հաստատված է նաեւ Աբրահամի մրցակցի անունը՝ EBU վարկածով նախկին չեմպիոն՝ 33-ամյա լեհ Պյոտր Վիլշեւսկի: «Մարտական եմ տրամադրված՝ ինչպես միշտ: Հերթական անգամ կգնամ հաղթելու, իսկ մինչ այդ ինձ սպասում են ամենօրյա մարզումներ»,- նշել է Արթուր Աբրահամը:

Հիշեցնենք, որ հունվարի 14-ին Գերմանիայի Օֆֆենբուրգ քաղաքի «Բադեն-Արենա» համալիրում Աբրահամն արգենտինացի Պաբլո Օսկար Նատալիո Ֆարիասին մենամարտի 5 րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց՝ նվաճելով WBO վարկածով միջին քաշային կարգում Եվրոպայի չեմպիոնի կոչումը:

## Կլիչկոն Չիսորայի հետ նոր մենամարտ է պահանջում



Դերեկ Չիսորայի նկատմամբ տարած միավորներով հաղթանակը չի գոհացրել Վիտալի Կլիչկոյին: Աշխարհի չեմպիոնը ցանկանում է սանձարձակ անգլիացուն պատժել լրիվ ծրագրով:

«Տրամաբանորեն ռեւանշ մրցամարտն ինձ բացարձակ հարկավոր չէ: Բայց ինքնասիրությունս պահանջում է, որպեսզի նա իր բոլոր արածների համար արժանի պատիժ ստանա: Ես նրան պետք է ռինգում նոկաուտի ենթարկեմ», լրատվամիջոցներին ասել է Վիտալի Կլիչկոն:

Բայց մինչ ուկրաինացին մտածում է Չիսորայի հետ նոր մենամարտի մասին, Գերմանիայի ԶԼՄ-ները հայտնի ասուլիսում Չիսորա-Դեւիդ Հեյ ծեծկռտուքի հետ կապված հետաքրքիր տեղեկություններ են հրապարակում: Մասնավորապես, Գերմանիայի դատախազությունը շահագրգռված է, որպեսզի այդ երկու բռնցքամարտիկներն էլ դատապարտվեն ազատազրկման: Եվ եթե Չիսորային Մյունխենի օդանավակայանում յոթ ժամ հարցաքննելուց հետո պայմանականորեն ազատ են արձակել, ոստիկանությունն այդպես էլ չի գտել կռվի երկրորդ մասնակցին: Տեղեկություններ կան, որ Հեյն իր մարզչի հետ հասցրել է Գերմանիայից փախչել Անգլիա: Սակայն նրա տեղն առայժմ հայտնի չէ: Նրան հայտնաբերելու համար Գերմանիայի իրավապահները մտադիր են դիմել Սքոթլանդ Յարդին:

Գերմանական մամուլը նշում է նաեւ, որ Հեյը ճողոպրելու եւ թաքնվելու ավելի հիմնավոր պատճառներ ուներ, քանի որ նրան նախ ավելի խիստ պատիժ է սպասվում, քան Չիսորային, ապա՝ նա վախեցած է, որ Չիսորան ի կատար կածի իրեն տված սպանելու խոստումը:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹ

# «Մեր կոմպոզիտորական դպրոցը իր դեմքը առայժմ չունի»

## Շվեյցարաբնակ կոմպոզիտոր Դավիթ Հալաջյանի մեկնաբանությունները

«Արամ Խաչատրյան» համերգասրահում փետրվարի 24-ին կայանալիք համերգը նվիրված է շվեյցարաբնակ կոմպոզիտոր Դավիթ Հալաջյանի ծննդյան 50-ամյակին: Երեկոյի ծրագրում հոբելյարի ներկայությամբ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի (գեղարվեստական ղեկավար՝ Էդ. Թոփչյան), Հայաստանի պետական կամերային երգչախմբի (գեղարվեստական ղեկավար՝ Ռ. Մլքեյան), Ազգային օպերային թատրոնի մեներգիչներ Սյուզաննա Մելքոնյանի եւ Գուրգեն Բավեյանի մեկնաբանմամբ կինչի կոմպոզիտորի «Missa de Lumine» մեսսան՝ Էդ. Թոփչյանի ղեկավարությամբ:



Կոմպոզիտորի ստեղծագործությունները մշտապես գտնվում են լավագույն նվագախմբերի, երգչախմբերի, անվանի դիրիժորների, մեներգիչների ուշադրության կենտրոնում: Հայաստանյան որոշ կոլեկտիվներ տարին մի քանի անգամ անդրադառնում են ճանաչված կոմպոզիտորի երկերին, սակայն այս համերգը 1991 թվականից Ցյուրիխում բնակվող ու ստեղծագործող արվեստագետին նաեւ դեմքով գիտենալու լավ առիթ է լայն ունկնդրի համար:

«Առավոտը» Դ. Հալաջյանից հետաքրքրվեց՝ արդյո՞ք Եվրոպան այսօր լավ է ճանաչում հայ կոմպոզիտորական դպրոցի ներկայացուցիչներին: «Մեր կոմպոզիտորական դպրոցը իր դեմքը առայժմ չունի,- ասելուց հետո նա մանրամասնեց,- աշխարհը ճանաչում է, օրինակ, ռուսական, անգլիական, գերմանական դպրոցի ստեղծագործողներին: Ինչ խոսք, հայ կոմպոզիտորներից ոմանք էլ հայտնի են աշխարհին: Այսուհանդերձ, հայ կոմպոզիտորական դպրոց՝ որպես այդպիսին, չեն կարող ճանաչել, քանի որ հայտնի անունների գործերը, այդ թվում՝ Խաչատրյանի, Տերտերյանի, Մանսուրյանի, տարբեր ուղղվածություն ունեն: Մի խոսքով՝ հայտնի ենք անհատներով»:

Հարցին, թե ինքը ուսում ստանալով Երեւանի ուսումնարանում՝ Արամ Սաթյանի դասարանում, կոնսերվատորիայում՝ Էդգար Հովհաննիսյանի դասարանում, ապա Շվեյցարիայում՝ Բեննեթիի եւ Կեսլերի ղեկավարությամբ, ի վերջո, ո՞ր դպրոցն է ներկայացնում, մեր զրուցակիցը պատասխանեց. «Ինձ համարում եմ Կոմիտասի գործին, հայ հոգեւոր երաժշտությանը նվիրված ու նվիրյալ ստեղծագործող: Մի տեսակ պարտավորվածություն եմ զգում այդ առումով: Չեմ էլ կարող անտեսել նաեւ եվրոպական ազդեցությունը: Ստեղծագործում եմ, օրինակ, լատիներենով եւ հենց լեզուն այս դեպքում թելադրում է ամեն ինչ: Նշեմ, որ օտարները իմ գործերը ընդունում են որպես հայկական, ինչը երբեք չեմ էլ թաքցրել, իմ ծագմամբ հպարտ եմ»: Դավիթ Հալաջյանը հավելեց նաեւ, որ ազգային երաժշտության հետ կապվածությունը մեծ ուժ է ու առավելություն, շեշտելով, թե Կոմիտասին ենք պարտական ունենալու ազգային մաքրամաքուր երաժշտության համար:

Մեր դիտարկմանը, թե անգամ մասնագետների տեսակետները աշխարհում Կոմիտասի ճանաչված լինելու մասին, միմյանցից խիստ տարբեր են ու հակասական, Դ. Հալաջյանը պատասխանեց. «Մասնագետները՝ դաշնակահարները, ջութակահարները, երաժշտագետները, վոկալիստները հետաքրքրված են Կոմիտասով, ուրեմն դրանով ամեն ինչ ասված է: Դրանից ավելիին հասնելու ակնկալիք չպետք է ունենալ: Համոզված եմ, որ երբեք արտերկրի լայն ունկնդրի համար մեծ վարդապետի գործն ու երաժշտությունը չեն դառնա ամենօրյա պահանջվածության նյութ»:

Դառնալով սեփական հոբելյանին՝ երաժիշտը նշեց, որ այն տարվա ընթացքում կնշվի նաեւ Սան Ֆրանցիսկոյում, Կանադա-

### Միջին մասնագիտական կրթությունը պահանջված է

Այսօր նախնական եւ միջին մասնագիտական կրթության հաստատություններում սովորում է շուրջ 36 հազար ուսանող: Երեկ կայացած ասուլիսում ԿԳ նախարարության նախնական եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետ Ռոբերտ Աբրահամյանը նշեց, որ միջին մասնագիտական կրթությունն այլեւս պահանջված է աշխատաշուկայում, ու հաջողություններն էլ հիմնականում արձանագրվել են սպասարկման, զբոսաշրջության, շինարարության, գյուղատնտեսության ոլորտներում: Պարոն Աբրահամյանը «Առավոտի» հետ զրույցում հայտնեց, որ ԿԳ նախարարությունը ակտիվ աշխատանք է տանում գործարարներին ՄԿՈՒ համակարգ ներգրավելու ուղղությամբ, եւ նրանք հաճախ մասնակից են լինում կրթական չափորոշիչների մշակմանն ու պրակտիկ աշխատանքների կազմակերպմանը: Վարչության պետի ասելով, գործարարներին հնարավորություն է ընձեռվում լավագույն ուսանողներին ընտրել, իրենց մոտ աշխատանքի տեղավորել, վերջիններիս էլ՝ դրսեւորել սեփական մասնագիտական հմտությունները: Ռոբերտ Աբրահամյանը թվեց մի քանի կրթական հաստատություն՝ Վայոց ձորի, Լոռու տարածաշրջանային քոլեջներ, Երեւանի հայհունական պետական քոլեջ եւ այլն, որոնք, նրա խոսքով, վառ օրինակ են կրթական հաստատություն-բիզնես համագործակցության:

Գ. Հ.